

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՔԵՐՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 20-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

11 հունվարի 2011թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Զոհրաբյանի, Դ. Դանիելյանի,

գործով որպես պարասխանող ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ռոբերտ Սուքիասյանի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ռ. Սուքիասյանի՝ 14.06.2010թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՆՏ սահմանադրական դատարանի դատական կազմի 2010 թվականի հուլիսի 1-ի ՍԴԴԿՈ/2-22 որոշմամբ «Սնանկության մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի, 31-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 36-րդ հոդվածի 2-րդ

մասի 2-րդ պարբերության 1-ին նախադասության՝ ՆՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ քաղաքացի Ռ. Սուքիասյանի դիմումը քննության է ընդունվել մասնակի, եւ գործի քննության ընդունումը «Սնանկության մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության 1-ին նախադասության մասով մերժվել է՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասի:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Սնանկության մասին» Նայաստանի Նանրապետության օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1.** «Սնանկության մասին» ՆՏ օրենքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 2006թ. դեկտեմբերի 25-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. հունվարի 22-ին եւ ուժի մեջ է մտել 2007թ. փետրվարի 10-ից: Օրենքն ուժի մեջ մտնելու պահից վերջինիս 107-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով ուժը կորցրած է ճանաչվել «Անվճարունակության (սնանկության) մասին» Նայաստանի Նանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՆՕ-17-Ն օրենքը:

«Սնանկության մասին» ՆՏ օրենքի՝ «Սնանկության գործի ընթացքում կայացված ակտերի բողոքարկումը» վերառաջությամբ 20-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել դրանք կայացվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, վերաքննության կարգով, միայն սույն օրենքով նախատեսված դեպքերում: Մնացած դեպքերում դատարանի որոշումները վերջնական են եւ բողոքարկման ենթակա չեն»:

**2.** Քննության առարկա գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետեւյալին. ՆՏ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009թ. ապրիլի 6-ի վճռով «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 17.06.2009թ.: Դատարանի՝ 17.06.2009թ. որոշմամբ նշանակվել է «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ:

ՆՏ Կոփայքի մարզի ընդհանուր իրավասության դափարանի՝ 2009թ. օգոստոսի 6-ի որոշմամբ հաստատվել է պարտաբերների վերջնական ցուցակը: Այդ որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ՆՏ ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների փես-ջությունը, որը պահանջել է անվավեր ճանաչել ՆՏ Կոփայքի մարզի ընդհանուր իրավասության դափարանի 06.08.2009թ. որոշումը մասնակի՝ նշված որոշմամբ հաստատված 530 պահանջներից 524-ի մասով, եւ «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն, որը պահանջել է անվավեր ճանաչել ՆՏ Կոփայքի մարզի ընդհանուր իրավասության դափարանի 06.08.2009թ. որոշումը՝ նշված որոշմամբ հաստատված մեկ պահանջի մասով:

Երկու վերաքննիչ բողոքների առկայության պայմաններում ՆՏ Կոփայքի մարզի ընդհանուր իրավասության դափարանի 06.08.2009թ. որոշումը չի վիճարկվել 5 պահանջների մասով եւ այդ մասով որոշումը մրել է օրինական ուժի մեջ: Սնանկության գործով կառավարիչը 02.10.2009թ. նշանակել է պարտաբերների առաջին ժողովը, որին իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցելու թույլտվություն չեն ստացել պարտաբերներ Սարիբեկ, Ռոբերտ եւ Էդուարդ Սուքիասյանները, նկատի ունենալով, որ ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դափարանում բողոքի առկայության պայմաններում նրանց մասով առաջին աստիճանի դափարանի որոշումն օրինական ուժի մեջ չի մրել:

Սարիբեկ, Ռոբերտ եւ Էդուարդ Սուքիասյանները բողոք են ներկայացրել ՆՏ Կոփայքի մարզի ընդհանուր իրավասության դափարան՝ պարտաբերների ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով: Այդ որոշմամբ համաձայնություն է փրվել սնանկության հատուկ հաշվում պարտապանի գույքի վաճառքից կամ ակտիվների հավաքագրումից գոյացած միջոցների նկարմամբ սնանկության գծով կառավարչին 4 փոկոս հավելյալ վարձարրություն սահմանելու մասին: ՆՏ Կոփայքի մարզի ընդհանուր իրավասության դափարանի 22.10.2009թ. թիվ ԿԴ 1/0001/04/09 որոշմամբ մերժվել է այդ բողոքը: Դափարանն իր որոշումը պարճառաբանել է նրանով, որ երկու վերաքննիչ բողոքների արդյունքում «Պարտաբերների վերջնական ցուցակը հաստատվելու մասին» ՆՏ Կոփայքի մարզի ընդհանուր իրավասության դափարանի 06.08.2009թ. որոշումը չի վիճարկվել միայն 5 պահանջների մասով, եւ նշված որոշումը «Սնանկության մասին» ՆՏ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով 5 պահանջների մասով մրել է օրինական ուժի մեջ, իսկ մնացած 524 պահանջների մասով, որոնք ներառում են նաեւ Սարիբեկ, Ռոբերտ եւ Էդուարդ Սուքիասյանների պահանջները, որոշումն օրինական ուժի մեջ չի մրել, քանի որ նշված որոշումը 524 պահանջների մասով

վիճարկվել է ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանում: Ներկայացրել է «Մնանկության մասին» ՆՏ օրենքի 34-րդ հոդվածի ուժով սնանկության գործով կառավարիչը պարտավորելու առաջին ժողովի անցկացման վայրի եւ ժամանակի մասին ծանուցել է 5 պարտավորելու եւ պարտապահին:

Սարիբեկ, Ռոբերտ եւ Էդուարդ Սուքիասյանները ՆՏ Կոմիտեի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 22.10.2009թ. թիվ ԿԴ 1/0001/04/09 որոշման դեմ բերել են վերաքննիչ բողոք, որը ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.12.2009թ. թիվ ԿԴ 1/0001/04/09 որոշմամբ վերադարձվել է: Դատարանը, հղում կատարելով «Մնանկության մասին» ՆՏ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերին, գրել է, որ օրենսդիրը սնանկության գործով կայացված որոշումները վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն է նախատեսել միայն «Մնանկության մասին» ՆՏ օրենքով սահմանված դեպքերում, իսկ սնանկության գործով պարտավորելու ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու մասին դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն չի նախատեսել:

ՆՏ վճռաբեկ դատարանն իր՝ 17.02.2010թ. թիվ ԿԴ1/0001/04/09 որոշմամբ վերահաստատելով ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, վերադարձրել է նշված որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը: Վճռաբեկ դատարանը նաեւ փաստել է, որ «...հիմնավորված չէ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա»: Միաժամանակ վճռաբեկ դատարանը գրել է, որ «...վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին բողոք բերած անձանց հիմնավորումը հերքվում է վերաքննիչ դատարանի որոշմամբ նշված պարճառաբանություններով»:

3. Դիմողը գտնում է, որ «Մնանկության մասին» ՆՏ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասը հակասում է ՆՏ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին՝ այնքանով, որքանով առանց արդար դատաքննություն ապահովելու վեճն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկում չի նախատեսում: «Մնանկության մասին» ՆՏ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՆՏ Սահմանադրությանը հակասությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ պարտավորելու ժողովի որոշումների բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտը հանդիսանում է վեճն ըստ էության լուծող դատական ակտ, որը, ըստ դիմողի, պետք է ենթակա լինի վերաքննու-

թյան կարգով բողոքարկման: Այլապես, ըստ դիմողի, սահմանափակվում է դատարանի մատչելիության իրավունքը, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Դիմողը գտնում է, որ, մի կողմից, օրենսդիրը սահմանել է կառավարչի գործողությունների եւ ժողովի որոշումների բողոքարկման հնարավորություն, մյուս կողմից՝ չարդարացված փրամաքանությամբ սահմանափակել է սնանկության գործով դատարանի կողմից վեճի առարկա հարցի առթիվ կայացված որոշումների բողոքարկումը եւ դրանց նկատմամբ վերադաս դատարանի վերահսկողությունը:

Վկայակոչելով նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերը, դիմողը շեշտում է, որ դատական մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող արդարացվել միայն այն պարճառաքանությամբ, որ այն կատարվում է օրենքի հիման վրա:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը դիմողը փաստարկում է նաեւ նրանով, որ «...մեկ ապյանի կարգով պարտավորելը (այդ թվում՝ Դիմողը) հնարավորություն չեն ունեցել նույնիսկ մասնակցելու դատական նիստին եւ ներկայացնելու իրենց փաստարկները, առարկելու հակառակորդ կողմի փաստարկների դեմ, այլ կերպ ասած չի ապահովված արդարացի լսումների իրավունքը...»:

Դիմողը նույնպես ընդունում է, որ «...սնանկության գործերով ոչ բոլոր դատական ակտերն են ենթակա բողոքարկման վերադասության կարգով»: Սակայն գտնում է, որ դա չի վերաբերում սնանկության գործով կառավարչի կողմից պարտապանների փվյալ կոնկրետ ժողովի հրավիրման հետ կապված վեճին:

**4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Իր այդ դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը մեջբերում է որոշ օրարերկրյա պետությունների՝ սնանկության վերաբերյալ իրավական ակտերի համապատասխան դրույթները եւ նշում, որ սնանկության վարույթի ընթացքում ընդունվող որոշումների բողոքարկման այդպիսի համակարգի առկայությունը բնորոշ է ոչ միայն Նայասպանի Նանրապետության, այլ նաեւ օրարերկրյա մի շարք պետությունների սնանկության ընթացակարգերին:**

Նդում կապարելով ՆՏ վճռաբեկ դատարանի 21.12.2006թ. եւ 14.04.2008թ. որոշումներին՝ պարասխանողը գտնում է, որ պարտավորւթերի ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու վերաբերյալ դատարանի որոշումը չի հանդիսանում վեճն ըստ էության լուծող դատական ակտ:

Նդում կապարելով ՆՏ սահմանադրական դատարանի 28.11.2007թ. ՄԴՈ-719, 28.09.2010թ. ՄԴՈ-918, 02.11.2010թ. ՄԴՈ-922 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ պարասխանողը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտավորւթանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո սնանկության գործընթացը շարունակվում է «դատական խիստ հսկողության ներքո», գտնում է, որ այդ ընթացքում բացառվում է դատարանի կայացրած բոլոր որոշումների անմիջական բողոքարկումը, սակայն հնարավորություն է ընճեռվում դրանք բողոքարկել գործն ըստ էության լուծող դատական ակտերի շրջանակներում: Ըստ պարասխանողի՝ սնանկության վարույթի ընթացքում կայացված բոլոր ակտերի եռարյան բողոքարկման հնարավորության նախատեսումը կկազմալուծի սնանկության վարույթի ողջ ընթացքը, այն կդադարի լինել պարտավորւթանի, առավել եւս՝ պարտավորւթերի իրավունքների իրավական պաշտպանության մեխանիզմ՝ դրանով իսկ վերջիններիս գրկելով ՆՏ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացման հնարավորությունից:

5. Նաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը պայմանավորում է սնանկության գործով կայացվող դատական ակտերի բնույթի եւ տեսակների վերաբերյալ իրավակիրառական պրակտիկայում առկա մեկնաբանությանը, ինչպես նաեւ սնանկության գործով կայացվող դատական ակտերի բողոքարկման կարգով, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի եւ 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, սույն գործի քննության շրջանակներում ՆՏ սահմանադրական դատարանը կարեւորում է «Սնանկության մասին» ՆՏ օրենքում օգտագործված՝ «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական իմաստի բացահայտման, ինչպես նաեւ կիրառման պրակտիկայում դրսեւորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը: Միաժամանակ, սույն գործի քննության շրջանակներում կարեւորվում է նաեւ այն հարցի պարզաբանումը, թե որ իրավական ակտով կամ ակտերով սահմանված կանոններն են ենթակա կիրառման սնանկության գործերով դատավարական կարգի նկատմամբ:

6. «Սնանկության մասին» ՆՆ օրենքի՝ «Սնանկության գործերի քննության կարգը» վերաբերությամբ 1-ին հոդվածը սահմանում է.

«1. Սնանկության գործերի քննությունն իրականացվում է Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով եւ սույն օրենքով սահմանված կարգով:

2. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով»:

ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ի մասի երկրորդ պարբերության համաձայն. «Այլ օրենքներում (բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին»:

ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի եւ «Սնանկության մասին» ՆՆ օրենքի՝ վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ սնանկության գործի քննության ժամանակ ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով փվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Սնանկության մասին» ՆՆ օրենքով:

7. Անդրադառնալով «Սնանկության մասին» ՆՆ օրենքում օգտագործված՝ «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության պարզաբանմանը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված հասկացությունը չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթով, եւ ներառում է այն բոլոր վեճերի լուծմանն ուղղված դատական վարույթները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության ընթացքում, կամ առնչվում են պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարման իրավական հետեւանքներին: Այլ կերպ՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված դատական գործը, որպես սնանկության գործ, ի փարբերություն այլ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող գործերի, չի ավարտվում փվյալ վարույթով կայացված դատական ակտով եւ կարող է բաղկացած լինել մի քանի առանձին վարույթներից, որոնք, սակայն, չեն հանդիսանում առանձին

գործեր, այլ ներառվում են ԿՎԿՅԿ իրավասուբյեկտի սնանկության վերաբերյալ միասնական դատական գործում:

Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում, մասնավորապես.

ա/ այն հանգամանքը, որ «Սնանկության մասին» ՆՏ օրենքով օրենսդիրը նախատեսել է ոչ միայն պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի կամ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճռի կայացում, այլ նաև սնանկության գործն **ավարտելու** մասին վճռի կայացում (մասնավորապես՝ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետ, 59-րդ հոդվածի 1-ին մաս, 69-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետ, 74-րդ հոդվածի 7-րդ մաս, 87-րդ հոդվածի 5-րդ մաս, 90-րդ հոդվածի 5-րդ մաս, 105-րդ հոդվածի 1-ին մաս): Ընդ որում, օրենսդիրը նախատեսել է սնանկության գործն ավարտելու փորձեր հիմքեր եւ, հետեւաբար, սնանկության գործն **ավարտելու** մասին՝ իրենց բնույթով փորձեր վճիռներ: Մասնավորապես՝ ֆիզիկական անձի սնանկության գործը **պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու** մասին վճիռ (օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մաս, 97-րդ հոդվածի 1-ին պարբերություն), **ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվությունը հաստատելու** եւ սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճիռ (օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետ), **լուծարման վարույթը դադարեցնելու** եւ պարտապանի սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճիռ (օրենքի 74-րդ հոդվածի 7-րդ մաս), **պարտապանի լուծարման հետեւանքով** սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճիռ (օրենքի 87-րդ հոդվածի 5-րդ մաս): **Այսինքն՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարմամբ ավարտվում է միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթը, այլ ոչ թե ողջ սնանկության գործը,**

բ/ «Սնանկության մասին» ՆՏ օրենքի՝ «Պարտապանին սնանկ ճանաչելու եւ դիմումը մերժելու հետեւանքները» վերաառությամբ 19-րդ հոդվածով, որպես պարտապանին սնանկ ճանաչելու հետեւանք, մասնավորապես, նախատեսվում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը նշանակում է սնանկության գործով կառավարիչ, նշանակում է պարտավերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը եւ վայրը, արգելանք է դնում պարտապանին պարկանոդ գույքի եւ դրամական միջոցների վրա, կարճում է նույն պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով այլ դիմումներով դատարանի վարույթում առկա գործերի վարույթը, կասեցվում են պարտապանի կանոնադրական (բաժ-



նեհավաք, փայտհավաք) կապիտալում մասնակցություն ունեցող անձանց՝ օրենքով եւ պարտապանի կանոնադրությամբ սահմանված այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ: Այս իրողությունը հաշվի առնելով՝ օրենսդիրը չի բացառում, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կարող են ծագել քաղաքացիաիրավական վեճեր՝ կապված սնանկության գործով կառավարչի գործողությունների, պարտավերերի ժողովի որոշումների հետ, կամ պարտապանի գույքի վրա արգելանք դնելու, պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտհավաք) կապիտալում մասնակցություն ունեցող անձանց լիազորությունների կասեցման իրավական հետեւանքների հետ: Միեւնույն ժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված վեճերի լուծման վերաբերյալ վարույթները կարող են հարուցվել մինչեւ սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճիռ կայացումը՝ օրենսդիրը նշված վարույթները դիտարկել է որպես միեւնույն սնանկության գործում ներառվող առանձին վարույթներ, այլ ոչ թե առանձին գործեր:

Ընդ որում, հաշվի առնելով վերը նշված՝ սնանկության գործի բաղադրարարը հանդիսացող առանձին վարույթների բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ օրենսդիրը նշված վարույթներից առանձնացրել է **երկուսը**, եւ միայն այդ վարույթներով կայացված դատական ակտերն է դիտարկել որպես վեճն ըստ էության լուծող դատական ակտեր: Խոսքը վերաբերում է **պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթին**, որի ընթացքում դատարանը կայացնում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կամ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռ (օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետ), եւ **սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթին**:

«Սնանկության մասին» ՏՏ օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սնանկության գործի բաղադրարարը հանդիսացող մի շարք առանձին վարույթների շարքում իրավաչափորեն առանցքային նշանակություն է վերապահել պարտապանին սնանկ ճանաչելու եւ սնանկության գործն ավարտելուն ուղղված վարույթներին: **Մնացած բոլոր վարույթները, այդ թվում՝ ժողովի որոշումների եւ սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթները, հանդիսանում են պարտապանին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտնող դատական ակտի իրավական հետեւանքները**, որոնք կարող են ծագել

պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո  
**մինչև սնանկության գործն ավարտելու մասին վճռի կայացումը:**

Նիմք ընդունելով վերագրյալ՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում այն դիրքորոշումը, համաձայն որի՝ ժողովի որոշումների բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտը հանդիսանում է վեճն ըստ էության լուծող դատական ակտ:

**8.** Ինչ վերաբերում է սնանկության գործի ընթացքում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությանը, ապա օրենսդիրը, դարձյալ ելնելով սնանկության գործի մաս կազմող առանձին վարույթների բնույթից, առանձնահատկություններից, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանից, սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միջանկյալ դատական ակտերի մի մասի համար է սահմանել բողոքարկման հնարավորություն:

Միեւնույն ժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմողի փաստարկներն առնչվում են ոչ միայն ժողովի որոշումների, այլ նաեւ սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման արդյունքում կայացվող դատական ակտերին, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ նշված վարույթներով կայացված դատական ակտերը, համաձայն «Սնանկության մասին» ՆՏ օրենքի՝ ենթակա չեն բողոքարկման, նշված դատական ակտերի վերջնական լինելու հանգամանքի գնահատման նպատակով սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում գնահատել, մասնավորապես, ժողովի որոշումների եւ սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթի բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը:

Միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիության վերաբերյալ ՆՏ սահմանադրական դատարանն արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում: 2007թ. նոյեմբերի 28-ին «Զաղաքացի Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի՝ ՆՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» կայացված ՍԴՈ-719 որոշման 4-րդ կետում դատարանը նշել է. «...օրենսդիրը հիմնականում բողոքարկելի է համարում այն բոլոր ակտերը, որոնք կարող են **կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, ...:** Օրենսդրի կողմից առան-

ձին դափական ակտերի բողոքարկման հնարավորության բացառումը բխում է դափավարությունն անհարկի ձգձգումներից գերծ պահելու անհրաժեշտությունից, քանի որ դափարաններում քաղաքացիական դափավարության կարգով գործերի քննության համար օրենքը սահմանում է հստակ ժամկետներ: Փաստորեն, օրենսդիրը, յուրաքանչյուր կոնկրետ դափական ակտի կապակցությամբ, առաջնորդվելով արդարադափության շահերից բխող որոշակի նպատակներով եւ խնդիրներով, սահմանում է այս կամ այն դափական ակտի բողոքարկելիությունը»:

Սահմանադրական դափարանը գտնում է, որ 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման 4-րդ կետում ամրագրված՝ վերը նշված իրավական դիրքորոշումն ամբողջությամբ կիրառելի է սույն գործով վիճարկվող իրավանորմների առնչությամբ:

**9.** Արդյունավետ դափական պաշտպանության սահմանադրական իրավունքի փեսանկյունից հարկ է վեճի առարկա իրավունքների պաշտպանության երաշխիքները դիփարկել սնանկության վարույթին վերաբերող դափավարական այլ երաշխիքների համարեքստում, որոնք պեփք է ուղղված լինեն սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների եւ շահերի համակողմանի եւ հավասարակշռված պաշտպանությամբ:

Այս առումով, սահմանադրական դափարանի 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման լույսի ներքո գնահատելով պարտափերերի ժողովի որոշումների եւ սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթի բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության ասփինճանը՝ սահմանադրական դափարանը գտնում է, որ պարտափերերի ժողովի որոշումների եւ սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման արդյունքում կայացվող որոշումներն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում սնանկության գործի քննության հնարավորությունը, չեն խոչընդոփում դափարանի մափչելիության իրավունքի իրացման ընթացքը, հեփեւափար, ապահովում են նաեւ սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների եւ շահերի համակողմանի եւ հավասարակշռված պաշտպանությունը:

Ինքնանպատակ չէ այն, որ օրենսդիրը սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող մի շարք միջանկյալ դափական ակտեր, ի փարբերություն մյուսների, համարում է բողոքարկելի դափական ակտեր: Դրանք իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են կասեցնել կամ խոչընդոփել պարտափանին սնանկ

ճանաչելու պահանջով դատարանի մարզելիության իրավունքի իրացման ընթացքը, սնանկության գործի քննության հնարավորությունը, այն է՝ դիմումի ընդունումը մերժելու (օրենքի 14-րդ հոդված), դիմումը վերադարձնելու (օրենքի 15-րդ հոդված), պարտապանի մոտ ստուգման կամ ուսումնասիրության իրականացումը թույլատրելու (օրենքի 19-րդ հոդված), պահանջների վերջնական ցուցակը հաստատելու (օրենքի 20-րդ հոդված), պահանջի, պահանջի փոփոխության դեմ առարկությունները քննարկելու արդյունքում պահանջի չափը, օրինականությունը, առաջնահերթությունը եւ ապահովվածությունը որոշելու (օրենքի 46-րդ հոդված), սնանկ ճանաչված անձի գույքն օտարելու թույլտվություն փախու (օրենքի 50-րդ հոդված), պահանջը սահմանված ժամկետում չներկայացնելու պարճառների հարգելիությունը որոշելու մասին (օրենքի 85-րդ հոդված) որոշումները:

Այսպիսի իրավակարգավորման պարագայում սահմանադրական դատարանը գրնում է, որ իրավաչափ մոտեցում է ցուցաբերված օրենսդրի կողմից, երբ բողոքարկելի են համարվում սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միայն որոշակի խումբ միջանկյալ դատական ակտերը, քանի որ հակառակ մոտեցումը, երբ սկզբունքորեն բողոքարկելի կարող են դիտարկվել սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող առանց բացառության բոլոր միջանկյալ դատական ակտերը, այդ թվում՝ նաեւ ժողովի որոշումները եւ կառավարչի գործողությունները վիճարկելու վարույթով կայացված որոշումները, կարող է վրանգել դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացումը: Նման իրավակարգավորումը նպատակ է հետապնդում ապահովել արդարադատության արդյունավետ իրականացումը՝ գերծ պահելով այն անհարկի ձգձգումներից:

Այն հանգամանքը, որ քաղաքացիական վեճերի լուծման ժամանակ, երբ առկա է նաեւ ժամանակի գործոնի ազդեցությունը, միջանկյալ ակտերով վերաքննություն չնախատեսելն ինքնին չի նշանակում, որ հնարավոր չէ ապահովել արդյունավետ դատավարություն միայն դատական մեկ աբյանում գործի քննության պայմաններում: Տվյալ կոնկրետ դեպքում կողմի իրավունքների դատական պաշտպանության խնդիրը կարող է վերաքննության առարկա դառնալ նաեւ **սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթի շրջանակներում:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63,

64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապերության սահմանադրական դա-  
րարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Սնանկության մասին» Նայասրանի Նանրապերության օրենքի 20-րդ հոդ-  
վածի 5-րդ մասի դրույթները համապատասխանում են Նայասրանի Նանրապե-  
րության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապերության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ  
մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման  
պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

11 հունվարի 2011 թվականի  
ՍԴՈ-932